# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/32 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | SeqStudio 8 Flex Genetic Analyzer | SeqStudio | SeqStudio 8 Flex | ThermoFisher Scientific | Համակարգը ունի 8 կապիլյար և միաժամանակ մինչև 4 փլեյթերի ներբեռնման հնարավորություն: plug-and-play քարտրիջային համակարգ; սարքը թույլ է տալիս կապիլյարի ավտոմատ փոխում: Սարքը նախատեսված է walk-away automation-ի համար՝ ինչը նվազեցնում է տեխնիկական աշխատակիցների ներգրավվածությունը և նվազեցնում է մարդկային սխալների հավանականությունը: Սարքը ունի բարելավված օպտիկական համակարգ և զգայունության բարձր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | աստիճան, ինչը տալիս է ֆրագմենտների ավելի լավ բաժանում, գունային սպեկտրի զտում և զգայունություն նվազագույն ԴՆԹ կոնցենտրացիաների դեպքում։ Սարքը ապահովում է կարդալու ավելի բարձր ճշգրտություն (base calling accuracy)՝ շնորհիվ ավելի կայուն կապիլյարների և բարելավված ռեագենտների համակարգի։ Սարքը թույլ է տալիս ավելի երկար և հստակ քրոմատոգրամներ վերլուծել, դա հատկապես կարևոր է GC հարուստ հաջորդականությունների, մուտացիաների կամ հոմոզիգոտ/հետերոզիգոտ տարբերակների հայտնաբերման դեպքում։ Սարքը հանդիսանում է նոր սերնդի միջին թողունակությամբ գենետիկական անալիզատոր, որն օգտագործում է մազանոթային (կապիլյար) էլեկտրոֆորեզի տեխնոլոգիան՝ Սենգերյան սեկվենավորման և ֆրագմենտային վերլուծության համար։ Այն նախագծված է բարձր ճշգրտություն, աշխատանքային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ճկունություն և ավտոմատացման բարձր մակարդակ ապահովելու համար: Հիմնական տեխնիկական պարամետրերը` • Կապիլյարների քանակը: 8 կապիլյար (հնարավորություն ունի թարմացվելու մինչև 24-ի): • Լազերային աղբյուր: 505 նմ պինդմարմնային լազեր (Solid-state laser): • Ներկերի դետեկցիա: Աջակցում է մինչև 8 ֆլուորեսցենտային ներկերի միաժամանակյա օգտագործում (ֆրագմենտների բարդ մուլտիպլեքս վերլուծության համար): • Նմուշների տարողունակություն: 4 պլանշետի տեղադրման հնարավորություն (96 կամ 384 հորանոց պլանշետներ, ինչպես նաև 8-խողովակաշարային ստրիպներ): • Ներքին հիշողություն: 512 ԳԲ Solid State Drive (SSD): • Օպերացիոն համակարգ: Ներկառուցված համակարգիչ` սենսորային էկրանով և ձայնային հրամանների աջակցությամբ: Աշխատանքային արտադրողականություն (Throughput) Համակարգն ապահովում է շուրջօրյա (23-ժամյա) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | աշխատանքային ցիկլ հետևյալ արտադրողականությամբ. Սեկվենավորում (Sanger Sequencing): • Short Read (300+ bp): Մինչև 368 նմուշ օրական (50 սմ կապիլյար, POP-7 պոլիմեր): • Rapid Read (500+ bp): Մինչև 280 նմուշ օրական (50 սմ կապիլյար, POP-7 պոլիմեր): • Fast Read (700+ bp): Մինչև 168 նմուշ օրական (50 սմ կապիլյար, POP-7 պոլիմեր): • Standard Read (850+ bp): Մինչև 88 նմուշ օրական (50 սմ կապիլյար, POP-7 պոլիմեր): Ֆրագմենտային վերլուծություն (Fragment Analysis): • Standard Fragment: Մինչև 368 նմուշ օրական (36 սմ կապիլյար, POP-7 պոլիմեր): • Long Fragment (մինչև 1,200 bp): Մինչև 88 նմուշ օրական (50 սմ կապիլյար, POP-7 պոլիմեր): • SNaPshot: Մինչև 368 նմուշ օրական: Walk-away Automation: Շարունակական բեռնման հնարավորություն (Continuous loading), որը թույլ է տալիս ավելացնել նոր պլանշետներ նույնիսկ վազքի ընթացքում: Օպտիկական զգայունություն: sCMOS դետեկտորի շնորհիվ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ապահովում է բարձր որակի ֆրագմենտների բաժանում և զգայունություն նվազագույն ԴՆԹ կոնցենտրացիաների դեպքում (օրինակ՝ 1 նգ գենոմային ԴՆԹ-ի օգտագործում): Կապի և տվյալների կառավարում: Առաջադեմ Wi-Fi և Ethernet միացումներ, որոնք թույլ են տալիս հեռակա կարգավորել վազքը (remote run setup), վերահսկել սարքը և իրականացնել տվյալների փոխանցում Cloud հարթակ (Thermo Fisher Connect): Ավտոմատացված սպասարկում: Ավտոմատ կալիբրացիա և հեռակա անսարքությունների հայտնաբերում (Remote troubleshooting)` լաբորատորիայի պարապուրդը նվազեցնելու համար: Կիրառման հնարավորություններ: Համակարգը լիարժեք համապատասխանում է մոլեկուլային գենետիկայի ժամանակակից պահանջներին: Գյուղատնտեսություն: Խաղողի գենետիկական ռեսուրսների մոլեկուլային վերլուծություն, սորտերի նույնականացում և մարկեր-ասոցացված սելեկցիոն ծրագրեր: Հետազոտություն: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/32 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Բջջային գծերի վավերացում (STR analysis), MSI վերլուծություն, պլազմիդների սեկվենավորում և գենոմային խմբագրման (CRISPR) էֆեկտիվության ստուգում: Միկրոբիոլոգիա: Պաթոգենների, այդ թվում SARS-CoV-2-ի սեկվենավորում և նույնականացում: Ծրագրային ապահովում • Data Collection Software: Վազքի կառավարման համար: • Secondary Analysis: ներառում է մասնագիտական ծրագրեր ֆրագմենտային վերլուծության, վարիանտների հայտնաբերման), մինչև 5% հաճախականությամբ վարիանտների հայտնաբերման համար: Համակարգի հետ մատակարարվում է` - անխափան սնուցման սարք, • Անվանական հզորություն: 1.5kVa: • Ակտիվ հզորություն: 1500W (Power Factor 1.0): • Տեխնոլոգիա: Online Double Conversion (ապահովում է մաքուր սինուսոիդալ ելքային լարում և զրոյական անցման ժամանակ դեպի մարտկոցներ): - Մարտկոցներ և Ինքնավարություն • Կոնֆիգուրացիա: 12V / 9Ah; 3 հատ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | • Տիպ: Կապարաթթվային, հերմետիկ, չսպասարկվող մարտկոցներ: • Լիցքավորում: Սարքն ունի խելացի լիցքավորման համակարգ՝ մարտկոցների կյանքի տևողությունը երկարացնելու համար: - Դիզայն և Կառուցվածք • Տեղադրման տեսակ՝ կարող է տեղադրվել ինչպես սերվերային պահարանում, այնպես էլ ուղղահայաց՝ հատակին): • Ինտերֆեյս: Բազմաֆունկցիոնալ LCD էկրան, որը ցույց է տալիս լարման մակարդակը, մարտկոցի լիցքը և սարքի կարգավիճակը: - Միացումներ և Կապ (Ports) • Պաշտպանություն: RJ-11/45 դիմանակներ (հեռախոսային և ցանցային գծերի պաշտպանություն լարման տատանումներից): • Կառավարման պորտեր: USB պորտ: o RS232 պորտ: • Կոմպլեկտավորում: USB մալուխ և սնուցման (input) մալուխ: Ծախսանյութերի հավաքածու, որը ներառում է՝ - 50 սմ կապիլյար, 1 հատ, 160 ներարկումների համար նախատեսված - 96-ակոսանի միկրոպլանշետներ, 20 հատ - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Սեպտաներ միկրոպլանշետների համար, 20 հատ - POP-7 պոլիմեր, 960 նմուշների համար - Անոդային բուֆերի կոնտեյներ, 4 հատ - Կատոդային բուֆերի կոնտեյներ, 4 հատ - Ֆորմամիդ, 25 մլ - Ֆրագմենտային անալիզի համար ստանդարտներ, 800 թեստի համար Համակարգիչ` անհրաժեշտ պարագաներով Սարքավորումը պետք է տեղադրվի, որակավորվի և անձնակազմի ուսուցումը պետք է կատարվի արտադրող ընկերության կողմից հավաստագրված մասնագետների կողմից: Երաշխիքը` 1 տարի Հայտի հետ պետք է ներկայացնել արտադրողի կողմից մասնակցին տրված ավտորիզացիայի հավաստագիր (MAF): |